

«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա»

ՓԲԸ

2007 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1° ØE à øl 2† 2Ü 1° Ø° 1 2Ü ø

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական փեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 30-ի № 303Ա որոշմամբ համաձայնեցված «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2006-2009 թվականների ներդրումային ծրագրի շրջանակներում 2007 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2008 թվականի ապրիլի 3-ի № 2/9-012 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2007 թվականի ներդրումային ծրագիրը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2007 թվականի փարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2006-2009 թվականների քառամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախագիծում է փարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, անվտանգության բարձրացման և էլեկտրակայանքների փոխարինման նպատակով: Ներդրումներ է նախագիծում իրականացնել նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային փեխնիկայի և գնդեսական գույքի ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2006-2009 թվականների ներդրումային ծրագրով նախագիծում է իրականացնել 9 954,2¹ մլն դրամի ներդրումներ, որից 3 012,0 մլն դրամը 2007 թվականին: 2007 թվականի ներդրումային ծրագրի հիմնական ուղղությունները հետևյալն են.


- ա) «Երևան» ՀԷԿ-ի վերականգնման ուղղությամբ ներդրումներ՝ 2 781,0 մլն դրամ,
- բ) «Սևան» ՀԷԿ-ում էլեկտրակայանքների փոխարինում՝ 100,0 մլն դրամ,
- գ) ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝
 - այլ ներդրումներ, այդ թվում՝
 - մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում՝ 124,0 մլն դրամ,
 - հաշվապահական հաշվառման նոր ծրագրային փաթեթի ձեռքբերում՝ 5,0 մլն դրամ,

¹ Սույն վերլուծական փեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

- համակարգչային փեխնիկայի և արսեսուարների ձեռքբերում՝ 2,0 մլն դրամ:

Սպորտ՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2007 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Պ Ծ Ն Ա Բ 1



«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2007 թվականին իրականացված ներդրումները

Համաձայն փաստացի կափարված ներդրումների մասին հանձնաժողով ներկայացված հաշվեդրվության, 2007 թվականի ընթացքում ընկերությունը ներդրել է 321,95 մլն դրամի գումար, որը կազմում է հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալի 10,7%-ը, մասնավորապես.

ա) Երևան ՀԷԿ-ի վերականգնման քառամյա՝ 8107,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ներդրումային ծրագրից 2007 թվականին նախադեսվում էր իրականացնել 2 781,0 մլն դրամի աշխատանքներ: Երևան ՀԷԿ-ի վերականգնման շրջանակներում իրականացվել են ներդրումներ հետևյալ ուղղություններով.

- Տիղրովուրբինի և հիդրոգեներագորի վերականգնում՝ 0.31 մլն դրամ: Այս ուղղությամբ ներդրումային ծրագրով 2007 թվականին նախադեսվում էր իրականացնել 200.0 մլն դրամի ներդրումներ և աշխատանքներն ավարտել 2008 թվականին՝ կարարելով ևս 394.0 մլն դրամի ներդրումներ: Նշված

ներդրումները կապարվել են հիդրոգեներափորի փաթույթների ապամոնդրաժման աշխափանքների ուղղությամբ:

- Գլխամասային կառույցների վերականգնում՝ ներառյալ ջրավազանի մաքրում՝ 0,78 մլն դրամ: Նշենք, որ այս ուղղությամբ 2007 թվականին նախափեավում էր իրականացնել 128.0 մլն դրամի ներդրումներ: Գլխամասային կառույցների վերականգնման աշխափանքները նախափեավում էր ավարտել 2009 թվականին՝ 2008 և 2009 թվականներին համապատասխանաբար ներդնելով ևս 280.0 և 108.0 մլն դրամ: Նշված ներդրումները կապարվել են գլխամասային կառույցների վերականգնման նախագծային և փորձաքըննական աշխափանքների ուղղությամբ: Կապարված ներդրումների մի մասը՝ 0,33 մլն դրամը, ձևակերպվել է ընթացիկ ծախսերով, իսկ մնացածը՝ 0,45 մլն դրամը՝ մնացել է անավարտ:
- Դերիվացիայի վերականգնում՝ 173,04 մլն դրամ: Դերիվացիայի վերականգնման ուղղությամբ 2006-2009 թվականների համար նախափեաված էր իրականացնել 560,0 մլն դրամի ներդրումներ: 2006 թվականին այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել էր 387,35 մլն դրամի ներդրումներ նախափեաված 350,0 մլն դրամի փոխարեն: Գերազանցող ներդրումների 37,35 մլն դրամ ծավալը իրականացվել էր ի հաշիվ ներդրումային ծրագրի 2007 թվականի ներդրումների ծավալի: Փաստորեն, 2006-2007 թվականների ընթացքում դերիվացիայի վերականգնման ուղղությամբ ընկերությունը փաստացիորեն իրականացրել է 560,39 մլն դրամի ներդրումներ՝ նախափեաված 560,0 մլն դրամի փոխարեն:
- Երևան ՌԵԿ-ի վերականգնման ուղղությամբ 2007 թվականին ընկերությունը նաև իրականացրել է խորհրդապվական ծառայությունների ձեռքբերմանն ուղղված 122,85 մլն դրամի ներդրումներ, որոնք մնացել են անավարտ:
- Շենքների ու շինությունների վերականգնում՝ 6,19 մլն դրամ: Այս ուղղությամբ 2007 թվականին նախափեավում էր իրականացնել 130.0 մլն դրամի ներդրումներ: Շենքների ու շինությունների վերականգնման աշխափանքները նախափեավում էր ավարտել 2008 թվականին՝ ներդնելով ևս 138.0 մլն դրամ: 2007 թվականին այս ուղղությամբ իրականացված բոլոր աշխափանքները մնացել են անավարտ:

- Երևան ՀԷԿ-ի վերականգնման նպատակով ընկերության 2007 թվականի ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:
- բ) Աևան ՀԷԿ-ում 2007 թվականի ընթացքում նախադեսվում էր իրականացնել 100,0 մլն դրամի ներդրումներ՝ Էլեկտրակայնքների փոխարինման նպատակով: Այս ուղղությամբ 2007 թվականին ներդրումներ չեն իրականացվել:
- գ) Շամակարգչային գումարների և աքսեսուարների ձեռքբերման ուղղությամբ 2007 թվականին նախադեսվում էր իրականացնել 2.0 մլն դրամի ներդրումներ: Այս ուղղությամբ 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալը կազմել է 2,24 մլն դրամ:

Բացի վերը նշվածը, 2007 թվականին ներդրումներ են իրականացվել նաև անհետաճելի աշխատանքների իրականացման նպատակով՝ Հրազդան ՀԷԿ-ի N3 դերիվացիոն ջրանցքի վթարային վերականգնում՝ 9,70 մլն դրամ ծավալով և Քանաքեռ ՀԷԿ-ի N1 խողովակագծի վթարային վերականգնում՝ N2 խարսխահենարանի շրջանում՝ 6,85 մլն դրամ ծավալով, որոնց անհետաճելիության հիմնավորումը ներկայացվել է հանձնաժողով:

Աղյուսակ 1-ում ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի կարգարված ներդրումների համեմատական գնահատականը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղության, ենթառողդրության անվանումը	Հանձնաժողովի հետ 2007 թվականի համաձայնեցված ներդրումների կանխադեսվող ծավալը	2007 թվականի ընթացքում փաստացի կարգարված ներդրումների ծավալը	2007 թվականի ընթացքում ավարկված ներդրումների ծավալը**	Ներդրումային ծրագրի կարգարման ցուցանիշը			
1	2	3	4	5	6	7	8	9
		մլն դրամ	%*	մլն դրամ	%*	մլն դրամ	%*	%
1	Երևան ՀԷԿ-ի վերականգնում, այդ թվում	2781,0	92,3	303,17	94,2	561,03	96,8	10,9
1.1	Դիդրովուրդինի և հիդրոգեներակորի վերականգնում	200,0	6,6	0,31	0,1	0,31	0,1	0,2
1.2	Գլխամասային կառույցների վերականգնում, ներառյալ ջրավազանի մաքրում	128,0	4,3	0,78	0,2	0,33	0,1	0,6
1.3	Դերիվացիայի վերականգնում	210,0	6,9	173,04	53,8	560,39	96,6	82,4
1.4	Շենքերի և շինությունների վերականգնում	130,0	4,3	6,19	1,9	0,0	0,0	4,8

1.5	Խորհրդապակական ծառայություններ	-	-	122,85	38,2	0,0	0,0	0,0
1.6	Երևան ՇԷԿ-ի վերականգնման ուղղությամբ այլ ներդրումներ	2113,0	70,2	0,0	0,0	0,0	0,0	0,0
2	Սևան ՇԷԿ-ի էլեկտրակայանքների և ձկնապաշտպանական համալիրի սարքավորումների փոխարինում	100,0	3,3	0,0	0,0	0,0	0,0	0,0
3	Վյլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	131,0	4,4	2,24	0,7	2,24	0,4	1,7
4	ԸՆԴԱՄԵՆԸ (ներդրումային ծրագրի շրջանակներում)	3012,0	100,0	305,40	94,9	563,26	97,2	10,1
5	Վնիելածգելի աշխատանքների իրականացման նպատակով կարգաված ներդրումներ			16,55	5,1	16,55	2,8	
6	ԸՆԴԱՄԵՆԸ (իրականացված ներդրումներ)			321,95	100,0	579,81	100,0	

- * Տոկոսային հարաբերությունները ներկայացնում են գլխավոր ուղղության ներդրումների ծավալի գեսակարար կշիռը ներդրումային ծրագրի կամ փաստացի իրականացված ներդրումների ընդհանուր ծավալի նկարմամբ:
- ** Այս այլունակում ներկայացվում է նախորդ ժամանակաշրջանում անավարտ թողնված՝ 2007 թվականին ավարտված և 2007 թվականին կարգաված և ավարտված ներդրումների հանրագումարը:

Հանրագումարի թերեկով վերը նշվածը պետք է փաստենք, որ.

- իրականացված ներդրումների արդյունքում շահագործման են հանձնվել 579,81 մլն դրամի հիմնական միջոցներ, որոնց արժեքը ձևավորվել է 2006 թվականին անավարտ մնացած 387,35 մլն դրամի և 2007 թվականին իրականացված 192,46 մլն դրամի ներդրումների ծավալի գումարից, որից 7,48 մլն դրամը կարգաված ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներով:
- 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալից Երևան ՇԷԿ-ում իրականացված 129,49 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Սպորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիկալացված և հետագա կա- պիկալացման ենթակա ծախսեր (մլն դրամ)	Ընթացիկ ծախսեր (մլն դրամ)	Ընդամենը (մլն դրամ)
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահարվածում իրականացված ներդրումներից	387,35	-	387,35

2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կափարված աշխարհանքներից	312,23	7,17	319,40
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	2,24	-	2,24
4	Մեփական ուժերով կափարված աշխարհանքներից	0,0	0,31	0,31
4.1	աշխարհավարձ և սոցիալական ապահովության ծախսեր	0,0	0,31	0,31
4.2	հումք և նյութեր	0,0	0,0	0,0
4.3	գուղակայման ենթակա սարդավորումներ	0,0	0,0	0,0
4.4	այլ	0,0	0,0	0,0
5	Ընդամենը	701,82	7,48	709,30

Ինչպես գումարում ենք աղյուսակ 2-ից, 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալի մոտ 98,9%-ը հանդիսանում է կապիտալացված և հեփագայում կապիտալացման ենթակա աշխարհանքների արժեքը, որի մոտ 44,5%-ը իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Ներդրումների ընդհանուր ծավալի 1,1%-ը հանդիսանում է ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխարհանքների արժեքը, որի մոտ 96,0%-ը կողմնակի կազմակերպությունների կողմից իրականացված աշխարհանքներն են, իսկ մնացած 4,0%-ը՝ սեփական ուժերով կափարված աշխարհանքները: 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալի մոտ 0,3%-ը հանդիսանում են լնկերության բնականոն գործունեության ապահովման նպարակով համակարգչային գործառնությունների ծեռքբերմանն ուղղված ներդրումները:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի սակագնուվ փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

2007 թվականներին փաստացի իրականացրած ներդրումների ծավալից սակագնի վերանայման ժամանակ փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կորոշվի հեթևյալ կերպ՝

$$\text{ՍՓՆ} = \text{ԻՆ}(2007) - \text{ԱԱ}(2007) + \text{ԱԱԾ}(2006) - \text{ՕՕՉՆ}(2007)$$

որպես՝

ՍՓՆ սակագնի վերանայման ժամանակ փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալն է,

ԻՆ(2007) 2007 թվականին փաստացի իրականացված ներդրումների ծավալն

- Է, որը կազմել է 321,95 մլն դրամ,
- ԱԱ(2007)** 2007 թվականին փաստացի իրականացված անավարտ աշխատանքների ծավալն է, որը կազմել է 129,49 մլն դրամ,
- ԱԱԾ(2006)** 2006 թվականին անավարտ մնացած այն աշխատանքների արժեքն է, որոնք շահագործման են հանձնվել 2007 թվականին: Այդ գումարը կազմել է 387,35 մլն դրամ:
- ՕՕՉՆ(2007)** օգբակար և օգբագործվող չհամարվող ներդրումներ: Այս ծավալի մեջ ներառված են Երևան ՀԷԿ-ում հիդրոգեներագործ փաթույթների ապամոնփաժման և գլխամասային հանգույցի վերակառուցման նախագծի փորձաքննության արժեքները, քանի որ այդ աշխատանքների արդյունքները դեռևս չեն օգբագործվում լիցենզավորված գործունեության ընթացքում: Նշված ներդրումները կներառվեն միայն այդ ուղղություններով նախադեսվող աշխատանքների ամբողջական ավարտից հետո: Այդ գումարը կազմում է 0,64 մլն դրամ:

Այսպիսով, 2007 թվականին փաստացի իրականացրած ներդրումների ծավալից սակագնով փոխադրուցման ենթակա ներդրումների ծավալը կկազմի՝

$$321,95 - 129,49 + 387,35 - 0,64 = \mathbf{579,17 \text{ մլն դրամ}}$$